



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

«10» մարտի 2004թ .

N 212 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 24-ի N 457 որոշման 1-ին կետը և 2003 թվականի օգոստոսի 8-ի N 1048-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման կարգի 3-րդ կետը.

հ Ր ա մ ա յ ու մ ե մ`

Հաստատել`

ա) «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման հանձնաժողովի կանոնակարգը «` համաձայն 1-ին հավելվածի,

բ) «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման հանձնաժողովի անհատական կազմը «` համաձայն 2-րդ հավելվածի:

Վ. ԽԱԶԱՏՏՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հիմնական խնդիրները և գործառույթները, կազմավորման սկզբունքները և աշխատակարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնակարգով:

II. Հանձնաժողովի հիմնական խնդիրները և գործառույթները

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

3.1. ՀՀ Կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» N 1048-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման կարգի (այսուհետ՝ որակավորման կարգ) պահանջներին համապատասխան դիմողների որակավորման քննությունների (այսուհետ՝ քննություն) կազմակերպումը և անցկացումը,

3.2. հանձնաժողովի գործունեության և քննության կազմակերպման, որակավորման կարգի և սույն կանոնակարգի կատարելագործման և հստակեցման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը:

4. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ՝

4.1. դիմողի քննությանը մասնակցելու դիմումը մերժելու վերաբերյալ,

- 4.2. դիմողին չներկայացած համարելու վերաբերյալ,
 - 4.3. մասնակցին քննասենյակից դուրս հրավիրելու վերաբերյալ,
 - 4.4. մասնակցին որակավորված համարելու կամ չհամարելու վերաբերյալ,
 - 4.5. որակավորված հաշվապահի վկայականը (այսուհետ՝ վկայական) ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ,
 - 4.6. իր իրավասության սահմաններում որակավորման քննությունների կազմակերպմանը և անցկացմանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ:
5. Հանձնաժողովը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին հաշվետվություն է ներկայացնում նախորդ տարվա կատարած աշխատանքների վերաբերյալ:

III. Հանձնաժողովի կազմավորման սկզբունքները և աշխատակարգը

6. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով:

7. Ի պաշտոնե հանձնաժողովի նախագահ է նշանակվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի համապատասխան տեղակալը, իսկ քարտուղար՝ նախարարության աշխատակազմի այն կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցը, որի վրա դրված է հաշվապահների որակավորման քննությունների կազմակերպման, անցկացման և այդ նպատակով հանձնաժողովի հետ համագործակցելու գործառույթների իրականացումը:

8. Հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով, որոնք գումարվում են պարբերաբար՝ հանձնաժողովի նախագահի կամ նրա կողմից լիազորված անդամի (այսուհետ՝ հանձնաժողովի նախագահ) որոշմամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան 2 ամիսը մեկ անգամ, եթե ստացվել է առնվազն մեկ դիմում:

9. Հանձնաժողովի որոշումները ենթակա են արձանագրման, որտեղ նշվում են՝

9.1. հանձնաժողովի նիստի անցկացման ամսաթիվը և տեղը,

9.2. հանձնաժողովի կազմը,

9.3. քննարկվող հարցի բովանդակությունը,

9.4. հանձնաժողովի որոշման բովանդակությունը,

9.5. էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

10. Որակավորման կարգին համապատասխան հանձնաժողովի որոշումները դիմողի կողմից բողոքարկվելու դեպքում ենթակա են արձանագրման նաև բողոքը ներկայացրած անձի բացատրությունները, ապացույցները և դրանց քննարկման արդյունքում հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը:

11. Հանձնաժողովի նիստերը իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 50 տոկոսը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնակարգի 4.3-րդ ենթակետով նախատեսված որոշման, որը կայացվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 50 տոկոս կողմ ձայներով: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանդիսանում նախագահի ձայնը:

12. Սույն կանոնակարգի 4.4-րդ ենթակետով նախատեսված որոշումը կայացվում է քննության ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ առանձին սենյակում (դռնփակ), որի ժամանակ այդ սենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները: Քվեարկության ժամանակ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում որոշումը կայացվում է ի օգուտ դիմորդի:

13. Որակավորման կարգով նախատեսված որոշումների ընդունումն ապահովելու և հանձնաժողովի գործունեությունը կազմակերպելու համար հանձնաժողովի նախագահը՝

13.1. սահմանում է քննությունների անցկացման ժամկետները,

13.2. հրավիրում է հանձնաժողովի նիստեր և նախագահում դրանք,

13.3. ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և վկայականները,

13.4. քննարկման է ներկայացնում նիստերին երեք անգամ անընդմեջ չմասնակցած հանձնաժողովի անդամին հանձնաժողովի կազմում թողնելու

նպատակահարմարության կամ հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցը և համապատասխան առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին,

13.5. հանձնաժողովի անդամների միջև կատարում է պարտականությունների բաշխում,

13.6. իր լիազորությունների սահմաններում ընդունում է այլ որոշումներ:

14. Հանձնաժողովի քարտուղարը, կամ նրա բացակայության ժամանակ հանձնաժողովի նախագահի որոշմամբ քարտուղարի պարտականությունները կատարող հանձնաժողովի այլ անդամը (այսուհետ՝ հանձնաժողովի քարտուղար)՝

14.1. նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը,

14.2. կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, դրանց քաղվածքները և ստորագրում դրանք,

14.3. ստորագրում է վկայականները,

14.4. հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, որակավորման կարգին և հանձնաժողովի որոշումներին համապատասխան, իրականացնում է հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ աշխատանքներ:

15. Հանձնաժողովի մյուս անդամները՝

15.1. մասնակցում են հանձնաժողովի նիստերին, իրականացնում են հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ աշխատանքներ՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ որակավորման կարգին և հանձնաժողովի որոշումներին համապատասխան,

15.2. հանձնաժողովի նիստերին մասնակցելու հնարավորություն չունենալու դեպքում նախապես տեղեկացնում են հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

16. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի գործունեության հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվին:

17. Հանձնաժողովն իր նիստերի նախապատրաստումը և որոշումների կատարումը, ինչպես նաև դիմողի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացումն ապահովելու հետ կապված աշխատանքներն իրականացնելու նպատակով, համագործակցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի այն կառուցվածքային ստորաբաժանման հետ, որը կազմակերպում է դիմումների և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը, ուսումնասիրումը, պահպանումը, ինչպես նաև ապահովում է դրանց ամփոփ տեսքով ներկայացումը հանձնաժողովին: